ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թվականի սեպտեմբերի 7-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Շ. Հարությունյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

3.Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասղեկ Շ. Հարությունյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, հույս հայտնեց, որ շարունակելու են համագործակցել իրար հետ, և շատ է ցանկանում, որ այդ համագործակցությունն ընթանա փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Ընկեր Հարությունյանը նշեց նաև, որ նոր ուսումնական տարում ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1.Մարտիրոսյան Լիլիթ
2.Վարդանյան Լիլիթ
3.Ազատյան Տաթև
4.Հայրապետյան Մերի
5.Մովսիսյան Շուշան

Ակտիվ քվեարկության արդյունքում Մարտիրոսյան Լիլիթը ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասղեկին:

2. Լսեցին.- Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Շ. Հարությունյանը նշեց,որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:

Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու,սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնաօժանդակ պարագաներ,ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:Դասղեկը ներկայացրեց,որ դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ձեռք բերելու անհրաժեշտ ուսումնաօժանդակ պարագաներ,կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը և ժամանակին հանձնել գրադարանավարուհուն՝ համապատասխան ցուցակով:

3.Լսեցին.- Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ՝ Շահանե Հարությունյանը նշեց ,որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով /9-00--15-00/: Նա հորդորեց ծնողներին հետևել իրենց երեխաներին հավուր պատշաճի հաճախել դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.- Առավելագույնս ուշադիր լինել աշակերտների հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ժողովի նախագահ՝ Շ.Հարությունյան

Քարտուղար՝ Լ. Մարտիրոսյան